ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ
ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան
գրականության ինստիտուտի տնօրեն՝
բանասիրական գիտությունների դոկտոր
.....Վ. ԴԵՎՐԻԿՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի արտասահմանյան գրականության, գրական կապերի և գրականության տեսության բաժնի

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի արտասահմանյան գրականության, գրական կապերի և գրականության տեսության բաժնի 18.06.2022թ. նիստի

Նիստին մասնակցում էին՝

բ.գ.դ., պրոֆ. Հ. Էդոյանը, բ.գ.թ., դոցենտ Ք. Բեջանյանը, բ.գ.թ. Լ. Գասպարյանը, բ.գ.թ. Ա. Սողոյանը, բ.գ.թ. Վ. Նավասարդյանը և բ.գ.թ. Զ. Հայրյանը:

Նիստը վարում էր

Արտասահմանյան գրականության, գրական կապերի և գրականության տեսության բաժնի վարիչ՝ բ.գ.թ., դոցենտ Ք. Բեջանյանը

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

Էլլա Ազատի Սասատրյանի «Պոստմոդեռնիստական քրոնոտոպը Դոն Դելիլոյի ստեղծագործություն մեջ» թեկնածուական ատենախոսության քննարկումն ու հրապարակային պաշտպանության երաշխավորելու հարցը:

Նրանք հանձնարարեցին՝ բ.գ.դ., պրոֆ. Հ. Էդոյանը, բ.գ.թ., դոցենտ Ք. Բեջանյանը, բ.գ.թ. Ա. Սողոյանը և բ.գ.թ. Զ. Հայրյանը:

Ելույթ ունեցողները նշեցին, որ Էլլա Ասատրյանի թեկնածուական ատենախոսության գլխավոր հիմնահարցը՝ սրդի գրական գործընթացում և մասնավորապես ԱՄՆ-ի գրականության մեջ Դոն Դելիլոյի ստեղծագործության տեղի առավել հստակ որոշումն է:

Առանձնապես հետաքրքրական է նյութի ընտրությունը նմանատիպ հետազոտության համար: Ատենախոսը կենտրոնանում է հատկապես պոստմոդեռնիստական քրոնոտոպի ձևավորման և փոխակերպման առանձնահատկությունների վրա՝ հիմնվելով Դելիլոյի գիտակցականի և անգիտակցականի, արվեստի և բանականության, նորագույն տեխնոլոգիաների, անհատի և հասարակության միջև ընկած հակասությունների գեղարվեստական իրացման փորձին:

Դրվատելի է ատենախոսի լրջմիտ, վերլուծական մոտեցումը օգտագործվող գրականությանը, նրա ձգտումը համադրելու, համեմատելու տարբեր հեղինակների աշխատություններից քաղված փաստերը և հանգելու ինքնուրույն եզրակացությունների: Օգտագործված գրականության քննական ակնարկը, որը զետեղված է ատենախոսության ներածությունում, լավագույն ապացույցն է առ այն, որ հեղինակը հստակ կողմնորոշվում է մեծածավալ գրականագիտական նյութի մեջ:

Միանգամայն հիմնավորված և կուռ տրամաբանության վրա հիմնված է ատենախոսության կառուցվածքը, ինչը հնարավորություն է ընձեռում հեղինակին համակողմանի հետազոտելու իր իսկ կողմից առաջ քաշված հիմնախնդիրները:

Էլլա Ասատրյանի ատենախոսությունը բաղկացած է *Ներածությունից, երկու հիմնական գլուխներից, եզրակացությունից, բազմալեզու աղբյուրներ ընդգրկող մատենագրությունից և հավելվածից*. Հարկ է նշել, որ ատենախոսության մեջ առկա է առաջադրված թեմայի շրջանակներում հետագա ուսումնասիրության հեռանկարը:

Ներածությունում ատենախոսը հիմնավորում է թեմայի ընտրությունը, արժևորում է աշխատության ուսումնասիրության հարցերը, նկարագրում է հետազոտման մեթոդները,

ինչպես նաև՝ գիտական նորույթը: Այստեղ հեղինակը տալիս է Դոն Դելիլոյի ստեղծագործության ու նրա առանձնահատկությունների ընդհանուր բնութագիրը, ինչպես նաև քննադատական գրականության հակիրճ ակնարկը:

Ատենախոսության *առաջին գլուխը՝* **«Տարածությունը՝ որպես քրոնոտոպի կառուցման գերակա միավոր Դոն Դելիլոյի ստեղծագործություններում («Սպիտակ աղմուկ», «Մառ Երկրորդ», «Զրո K»)»**, որոշակիորեն կրում է տեսական բնույթ: Ատենախոսը վերլուծում է տարբեր պոստմոդեռն փիլիսոփաների, գրողների և երկրի քաղաքական իրավիճակի ազդեցությունը հեղինակային տեսության ձևավորման և զարգացման վրա՝ առավել մեծ ուշադրություն դարձնելով Խ. Օրտեգա-ի-Գասետի, Ժ. Բոդրիյարի, Ի. Հասանի տեսության նմանություններին և տարբերություններին, դրանց ազդեցությանը Դելիլոյի տեսական հայացքների հետ: Նա ուսումնասիրում է տեղեկատվական տեխնոլոգիաների և ժամանակ-տարածություն հասկացությունների փոխազդեցությունները: Այս թեմաների քննությունն ուսումնասիրության մեջ առկայությունը թույլ է տալիս ատենախոսին իր հետազոտության մեջ անդրադառնալ ամերիկացի տեսաբան Դուգլաս Ռաշքովի առաջարկած *ինֆո-քրոնոտոպ* եզրին և տեղավորել այն հեղինակի ստեղծագործությունների արժեքային համակարգի մեջ:

Ասատրյանը գալիս է այն եզրակացության, որ նշված վեպերում տարածությունն է դառնում քրոնոտոպի դոմինանտ միավոր և կառուցվում է տեղեկատվական տեխնոլոգիաների, պոստմոդեռնիստական գրականությանը բնորոշ *սիմուլյակրի* և *տոպոսների խճանկարայնությամբ*: Նա առաջարկում է *մեդիատարածություն* եզրը այս ստեղծագործությունների վերլուծման համար:

Երկրորդ գլուխը՝ **«Ժամանակը՝ որպես քրոնոտոպի կառուցման գերակա միավոր Դոն Դելիլոյի ստեղծագործություններում («Ընկնող մարդը», «Կոսմոպոլիս», «Օմեգա կետը»)»** նվիրված է ժամանակի և տարածության փոխադարձ կապի ուսումնասիրությանը: Այս գլխում ներկայացվում է «վիպական ժամանակ» գաղափարի գերակայությունը տարածության նկատմամբ՝ վերհանելով քրոնոտոպի ձևավորման մեխանիզմները: Ասատրյանը հետազոտություն է կատարում ամերիկացի տեսաբան Փ. Սմեթիրսթի

առաջարկած *սոցիալական ժամանակ* և *սոցիալական տարածություն* եզրերի համատեքստում: Այդ տեսությունը նրան հնարավորություն է տալիս ավելի հստակ սահմանումներ տալու՝ նույնիսկ գրողի գաղափարների ու կարծիքների հակասական լինելու դեպքում: Դրվատելի է երիտասարդ ուսումնասիրողի փորձը սեփական եզրեր և սահմանումներ տալու: Օրինակ՝ «Ընկնող մարդը» վեպի վերլուծությունում նա առաջարկում է ժամանակը սահմանել որպես «*անցյալացած ներկա*», իսկ «Օմեգա կետ»-ում դիտարկում է *ժամանակի երկարաձգման* ֆենոմենը: Այս գլխում ուսումնասիրվում է ժամանակակից գեղանկարչության ազդեցությունը գրողի ստեղծագործությունների վրա:

Ատենախոսը պնդում է, որ Դելիլոյի երկերում վիպական տարածության գերակայությունը ժամանակի նկատմամբ հիմնականում որոշվում է *մեդիատարածությամբ* և քաղաքների տոպոսներով, իսկ վիպական ժամանակի գերակայությունը տարածության նկատմամբ հիմնականում որոշվում է ահաբեկչություն, գլոբալացում, արվեստ թեմաներով:

Ատենախոսությունը վերջանում է ծավալուն **եզրակացություններով**, որտեղ ի հայտ են բերվում հետազոտության արդյունքները: Հարկ է նշել, որ ատենախոսության մեջ առկա է առաջադրված թեմայի շրջանակներում հետագա ուսումնասիրության հեռանկարը, ինչին անդրադառնալիս խորհուրդ կտանք ատենախոսին հաշվի առնել և ուղղել նշված թերությունները:

Այսպիսով, ամփոփելով տվյալ աշխատության՝ մեր գնահատականը, կարծում ենք, որ ծավալուն աշխատանք է կատարվել, որն ունի գիտական պատշաճ մակարդակ և հայեցակարգային հիմնավորված ապարատ:

Նյութի նմանօրինակ լայն ընդգրկմամբ և առաջադրված հիմնահարցերի բազմաձևությամբ հանդերձ, որոնց ատենախոսը կարողացել է իր գիտական աշխատության մեջ համոզիչ լուծումներ տալ, աշխատանքում տեղ են գտել որոշ անհարթություններ և անորոշություններ, որոնց մասին ցանկանում ենք խոսել առավել մանրամասն:

1. Կցանկանայինք, որ ատենախոսության մեջ ավելի շատ անդրադարձ կատարվեր «Զրո K» վեպի վերլուծությանն ու ուսումնասիրությանը: Այս վեպի քննությունը փոքրինչ մակերեսային է, բացակայում են խորքային դիտարկումներն ու

եզրակացությունները: Այնինչ, Դելիլոյի գեղագիտական համակարգի և աշխարհայեցության առանցքային շատ գծեր հատվում են հենց այս ստեղծագործության մեջ և ենթադրելի էր առավել լուրջ քննություն:

2. Անհրաժեշտ է աշխատանքում հստակեցնել տեխնիկական ապարատը և խուսափել կրկնողություններից ու տառասխալներից: Օրինակ, էջ 12-ում և գրականության ցանկում ներկայացված են աշխատություններ՝ ոչ լիարժեք նկարագրությամբ:
3. Կարծում ենք, որ ատենախոսում պետք չէ ներկայացնել տողատակերը:

Այնուամենայնիվ, վերոհիշյալ բոլոր դիտողությունները չեն նսեմացնում հետազոտության գիտական արժեքը: Ատենախոսությունը գիտական լուրջ խոսք է, խիստ հետաքրքիր, համապատասխանում է նմանատիպ աշխատություններին առաջարկվող պահանջներին, իսկ հեղինակը արժանի է իր հայցած բանասիրական գիտությունների թեկնածուի կոչմանը:

Որոշեցին՝ Էլլա Ազատի Ասատրյանի «Պոստմոդեռնիստական քրոնոտոպը Դոն Դելիլոյի ստեղծագործություն մեջ» թեկնածուական ատենախոսության բավարարում է Ժ.01.07. / Արտասահմանյան գրականություն/ մասնագիտությամբ բանասիրական գիտությունների թեկնածուի աստիճանի հայցման համար ատենախոսությանը ներկայացվող պահանջները և այն կարելի է երաշխավորել հրապարակային պաշտպանության:

Կարծիքը ձևակերպված և հաստատված է ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի արտասահմանյան գրականության բաժնի նիստում:

Արտասահմանյան գրականության, գրական կապերի և գրականության տեսության բաժնի վարիչ՝ բ.գ.թ., դոցենտ Ք. Բեջանյանը

Հաստատում եմ բ.գ.թ., դոցենտ Ք. Բեջանյանի ստորագրությունը՝
Գրականության ինստիտուտի գիտքարտուղար՝ բ.գ.թ. Հ. Որսկանյան

18. 06. 2022